

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՎԵՊԻ ԶԵՌԱԳՐԵՐԸ Ս.
ՂԱԶԱՐՈՒՄ ԵՒ ՆՐԱ 1842 Թ. ՎԵՆԵՏԻԿԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Իւղաքանչիւր ժողովուրդ ունի իր պատմութիւնը եւ այդ պատմութեան մէջ՝ իրողութիւններ, որոնցով կարելի է դատել նրա ոգու ոյժի եւ մտքի վսեմութեան մասին։ Ինքնին հասկանալի է՝ որքան մեծ է ժողովուրդը եւ արժանապատիւ նրա պատմութիւնը, նոյնքան ապշեցուցիչ է ճակատագրի անբարեյոյս հանգամանքների պարտադրանքից պատուով ու յաղթանակով դուրս գալու նրա կերպը։ Ազգային ոգու բացայացման տեսանկիւնից առաջնութիւնը, անկասկած, պէտք է տանք Մեսրոպ Մաշտոցին, նրա համախոհ աջակիցներին, նրա աւագ ու կրտսեր աշակերտներին, որ մեծ պատուախնդրութեամբ եւ ապշեցուցիչ շրջահայեցութեամբ վճռեցին հայոց արժանապատիւ գոյութեան խնդիրը։ Ազգութեան մտաւոր եւ քաղաքական կեանքի առաջամրտիկներին առաջարարած այս հեռայար ծրագիրը սքանչելի բիւրեղացաւ Մովսէս Խորենացու պատմահայեցութեան մէջ՝ իւրատեսակ հիմք եւ ուղեցոյց գառնալով հայոց պատմութեան յետագայ դժուարին եւ խոտորնակ դարերում, իւրովի միաւորելով ազգային կեանքը, մտածողութիւնը եւ մշակոյթը։

Այս ծրագիրը, որ իբրեւ լուսատու փարոս առաւել ուժգնութեամբ շողարձակուել է յատկապէս հայութեան օրհասական պահերին, իր հուժկու բռնկումն ունեցաւ նաեւ սրանից շուրջ եղբեք հարիւրամեակ առաջ՝ իտալիայի Վենետիկ քաղաքի Ս. Ղազար կղզում, Մխիթար Վարդապետ Մեբաստացու հիմնադրած կրօնական միաբանութեան ամրակուր եւ յուսալի պատերի ներսում, այս էլ որերորդ անգամ նորոգելու, «մոռացութեան փոշիներից փրկելու» եւ փայլեցնելու համար հայոց ոգեղին գէնքը՝ մեր հոգեւոր մշակոյթը՝ վստահելի կոռւաններ բերելով ազգային

վերածնութեան համար։ Անժխտելի իրողութիւն է հայ հոգեւոր դանձարանի հարստացմանը Մխիթարեան միաբանութեան բերած անուրանալի նպաստը։ Յայտնի ճշմարտութիւններ չամելու համար վերստին չանդրադառնանք նրա նշանաւոր գիտնական հայրերի պատմաբանասիրական, լեզուաբանական, տեղագրական, մատենագիտական, թարգմանական, բանաստեղծական, ձեռագրագիտական, աղքիւրագիտական, բնագրագիտական նուաճումներին «Համահայկական մտաւոր կեանքի վրայ նրա որոշակի ներգործութեանը»¹։ Այս պահին մեզ հետաքրքրողը Մխիթարեանների գործունէութեան ընդհանուր բանասիրական հետաքրքրութիւն ներկայացնող ոլորտներից մէկն է, որի մի շարք արդիւնքներ ժամանակին ստացան միջազգային արձագանք։ Խօսքը մարդկային քաղաքակրթութեան դասական արժէքների հայերէն հնագոյն թարգմանութիւնների բնագրերի գիտական հրատարակութեան հարուստ փորձի մասին է, որ կը ջանանք ներկայացնել մէկ, բայց յատկանշական օրինակով՝ Աղեքսանդրի վէպի բնագրի պատրաստման շուրջ 244-ամեայ վաղեմութեան հանգամանալից պատմութեամբ, որի ընթացքը փուլ առ փուլ մեզ յաջողուեց պարզել տեղում՝ Ս. Ղազարի մատենադարանի ձեռագրատանը կատարած պրատումների ժամանակ։

Մխիթարեան միաբանութեան տարիներ առաջ ձեռնարկած «Մատենագրութիւնք նախնեաց» մատենաշարը եւ հայագիտութիւնն առհասարակ 1842 թ. հարստացան եւս մի արժէքաւոր հատորով՝ «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» գրքով, որ ներկայացնում էր անտիկ աշխարհի գեղարուեստական դասական յուշարձան, հելլենիզմի կարեւոր նուաճումներից համարուող, Կալիսթէնէսին վերագրուող Աղեքսանդրի վէպի Ե. դարրում կատարուած հայերէն թարգմանութիւնը։ Հարկ կա՞յ արդեօք, շեշտելու, որ գիրքն անմիջապէս իր վրայ բեւեռեց հայագիր եւ օտար մասնագէտների սեւեռուն ուշադրութիւնը։ Հիւբշմանը, Պետերմանը, Միւլերը, Զախերը, Ռումհելդը, Բառումգարդները եւ ուրիշներ, որ նախկինում արդէն եւրոպական լեզուներով վերջինիս հատուածական թարգմանութիւնների հիման վրայ նշել էին նրա թէ՛ հայագիտական, թէ՛ բիւզանդագիտական

¹ ՅԱԿՈԲԵԱՆ Պ., Բազմավեպի մէկուկես դարը, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1993, թիւ 3, էջ 192:

մեծ արդէքը, այժմ առաւել քան վստահելի կրուտաններ ստացան ազդարարելու, որ այն ներկայացնում է ւերկի յունարէն նախարարագրի հնագոյն վիճակը եւ, որ նրա շատ հատուածներ աւելի լաւ են պահպանուած, քան վէպի՝ Դ. դարի լատինական խմբագրութեան մէջ եւ, որ նրանում առկայ են յունարէն բոլոր ձեռագրերում անհետ կորած բնագրային շատ կտորներ: Եզրայանգում, որ յուշարձանի առ այսօր ձգուող հետազօտութիւնների արդիւնքներով շարունակաբար վերահաստատում, վերափառտարկում եւ իբրև գիտական տեսակէտ բիւրեղանում է:

Այս արժէքաւոր հրատարակութիւնը, լինելով առաջինը, անխուսափելիօրէն ունի նաեւ միալներ ու թերիներ՝ փաստական նիւթի սահմանափակութիւն, բնադիր ներմուծուած բուն ազգային բանաստեղծութիւնների՝ հարիւրաւոր բարձրարուեստ կաֆաների լիակատար անտեսում եւ զանցառում, տեսական-մեթոդաբանական խոցելի մօտեցումներ, որ մեզ համար առաւել ակնառու դարձան մեր ձեռնարկած՝ Աղեքսանուրի վէպի հայկական տարրեր խմբագրութիւնների նոր, աշխարհով մէկ սիուուած բոլոր կարեւորագոյն՝ թուով 70 գրչորինակների ու տուեալների օգտագործումով լիակատար հրատարակութիւնն իրականացնելու աշխատանքների ընթացքում։ Մակայն այս մասին չէ մեր խօսքը։ Ս. Ղազարում մեզ հետաքրքրում էին, ի շահ մեր աշխատանքի, մասնաւորապէս, վենետիկեան հրատարակութեան մէջ օգտագործանալու առաջնական մասի՝ ութի ինքնութեան ծուած տասը ձեռագրերի հիմնական մասի՝ ութի ինքնութեան պարզումը եւ բնագրային մի շարք մանրամասներ, որ այն ժամանակի սովորոյթի համաձայն նշուած չէին գրքում։

Եւ ահա այս ուղղութեամբ պրատումների ընթացքում
պարզուեց ոչ միայն այս հարցը՝ ճշտուեցին բոլոր ձեռագրերը,
այլև ի յայտ եկան ուշագրաւ. եւ ցարդ անծանօթ այլ փաստեր
եւս. Պարզում է, որ վենետիկեան հատորի իրագործման անդրա-
նիկ՝ կազմակերպչական բնոյթի աշխատանքների նախապատմու-
թիւնը ձգւում է նրա լոյս աշխարհ գալու թուականից՝ 1842
թիւնը ձգւում է տարի ետ՝ 1756 թուականը, երբ Ս. Ղա-
թուականից շուրջ 86 տարի ետ՝ 424 ձե-
զար կղզում կատարում է տեղի մատենադարանի թիւ 424 ձե-
ռագրի ընդօրինակութիւնը. Գրեթէ անմիջապէս այս խոչոր ձեռ-
ուագրի ընդօրինակութիւնը ոչ լայն ծաւալ, իր ուրոտը, ներգրաւելով ոչ
նարկումն ստանում է լայն ծաւալ, իր ուրոտը, ներգրաւելով ոչ
միայն տեղի, այլև ուրիշ վայրերի նշանաւոր հայ բանասէրների
ու գործիչների, աւելացնենք նաև, գիտական աշխատանքի

Հսկայական, կազմակերպիչների՝ Մկրտիչ Աւգերեան, Եփրեմ Աէթեան, Յակոբոս Չամչեան, Ստեփանոս Մելքոնեան, Յարութիւն Մաղաքեան եւ ուրիշներ, որոնց համատեղ ջանքերով Վենետիկում, Պոլսում, Թիֆլիսում եւ այլուր կազմակերպում են Պատմութեան ձեռագիր օրինակների հաշուառումը, տուեալների նախնական նօթագրումը, բնագրային համեմատութիւնները, գրչագրերը տեղաշարժելու ու Վենետիկ ուղարկելու անհարինութեան պայմաններում յաճախ նաեւ հնօրեայ գրիշների տքնանքով անձամբ իրականացումը այդ մեծածաւալ երկի ընդօրինակութեան եւ պատրաստի օրինակների առագումը Ս. Ղազար՝ վերջնական հանրագումարի:

Այս ըստ էութեան գիտական բազմաճիւղ գործուղումների ընթացքում ամբարած նիւթը Ս. Ղազարում անցնում է իր մշակման երկրորդ փուլը. վերլուծական քարտերի պատրաստում, գրչօրինակների խմբաւորում ըստ ծագումնաբանական մերձակցութեան, առաւել արժէքաւորների որոշարկում, տարընթերցուածների դուրսգրում եւ, վերջապէս, թարգմանութեան եւ յունալատինական առանձին տարբերակների հետ զուգադիր քննութիւն, մասնակիօրէն նաեւ վերջիններիս բնագրային թերինների վերականգնում, եւ աղճատումների սրբագրում:

Ս. Ղազարի մատենադարանում պահպանուած նիւթերից պարզ է դառնում, որ գիտական սոյն հատորի արարման չափազանց բարդ գործընթացը հովանաւորել եւ մինչեւ իր մահը անձամբ ղեկավարել է Միխթար Աբբահօր արժանաւոր յետնորդ Ստեփանոս Աբբահայր Մելքոնեանը, որին պարբերաբար՝ գրաւոր՝, թէ բանաւոր, տարբեր վայրերից հաշուետու են եղել Վէպի ձեռագրերի հետքերով գիտական աշխոյժ երթեւեկի մէջ գտնուող սուրբ հայրերը: Ահաւասիկ որոշ նմոյշներ աշխատանքի ընթացքը լուսաբանող ընդարձակ նամակագրութիւնից. «Ցանձնեցի Հ. Իգնատիոսի տանել ընդ իւր ի վանս... զձեռագիր Պատմութիւն Աղեքսանդրի» (Հայ Յակոբոս Չամչեան, Պոլիսէն, 11 Սեպտ. 1767ին, առ Ստեփանոս Մելքոնեան Աբբահայր, Վենետիկ), «Զգիրքն Պատմութեան Աղեքսանդրու, զոր առաքեցի ի վանս ընդ Հ. Իգնատիոսին, այժմ խնդրէ տէր նորա, եւ թէպէտ Հ. Իգնատիոսն, ասաց ինձ, թէ կամի վաճառել տէրն, սակայն այժմ ոչ վաճառէ, եւ եթէ վաճառեսց՝ խնդրէ աւելի քան զշորս զէրիմահպուա ուսկիս....: Ուստի եթէ կամիք գնել, ծանուցէք մեզ,

զի ըստ այնմ տացուք գգինն տեառն գրքին. իսկ եթէ ոչ կամիք գնել զայն, այլ միայն օրինակել, աղաջեմ փութով օրինակեցէք եւ զօրինակն փութով առաքեցէք, որպէսզի եւ մեք օր մը յառաջ ազատեացուք ի թախանձանաց նորա» (Հ. Յակոբոս Չամչեան, Պոլիսէն, 14 Փետր., 1768ին, առ Ստեփանոս Մելքոնեան Աբբայ), «Գրեալ էիք, թէ գոյ առ Հ. Յակոբոսն վարք Մեծին Աղեքսանդրի ձեռագիր: Ասացի Հ. Ղուկասին, եւ նա ասաց, թէ զայտ գիրք ասէ, Հ. Յակոբոսն ի բազում անդամ տեսի ի գրքատան, ասէ, վասն որոյ որոնեցէ ի վասն (Հ. Յարութիւն Մաղաքեան, Պոլիսէն, 20 Սեպտ., 1789ին, առ Ստեփանոս Մելքոնեան Աբբայ), «Վասն Վարուց Մեծին Աղեքսանդրի ծանիր, զի մեք ունիմք աստ զմի օրինակ պակասաւոր՝ ըստ ասելոց Հ. Աղեքսանդրին գոյ առ Հ. Յակոբոսի եւ այլ օրինակ, եւ վասն այնորիկ գրեցաք հարցանել ցնա (Մելքոնեան Աբբայ, Վենետիկէն, 1 Նոյեմբ., 1789ին, առ Հ. Յարութիւն Մաղաքեան, Պոլիսիս):

Պարզում է, որ այսօր Ս. Ղազարի մատենադարանում պահում են նաեւ Աղեքսանդրի վէպի՝ հէնց. այդ տարիներին գործնական նպատակներով ստեղծուած, այսպէս կոչուած, աշխատանքային գրչօրինակների: Դրանցից մէկը՝ թիւ 385ը, ըստ էութեան, մի համեմատական բնագիր, մեծ տքնութեամբ, սեփական գրչութեամբ, հայկական եւ յունական բնագրերի հանդիպադիր քննութեամբ 1824 է. պատրաստել է բազմազբաղ Մկրտիչ Աւգերեանը: Յընթացս այլ զբաղումների, հրատարակութիւնը պատշաճ նմանօրինակ ձեռագրեր են պատրաստել նաեւ 1829 թ., շաճ նմանօրինակ ձեռագրեր են պատրաստել նաեւ 1831 թ. Թիֆլիսում Եփրեմ Վրդ. Մէթեանը, (թիւ 2239) եւ 1831 թ. Պոլսում՝ կարապետ Վրդ. Ասայեանը²:

Բնական է, որ գիտական նպատակներ իրագործող եղկարամեայ այս ոգորումների ընթացքում հրատարակութիւնը պատրաստող հոգեւոր եղբայրները՝ բոլորն էլ մեծաշնորհ, եռանդուն, համբեղատար, գիտելիքներով եւ լեզուների իմացութեամբ օժտուած ու նպատակի միասնութեամբ շաղախուած, միաձոյլ մի

2 Աղեքսանդրի պատմութեան վենետիկէան ձեռագրերի հանդամանալից նկար ըագրութիւնը անհաժեշտ ճշգրտումներով ու բացատրութիւններով տե՛ս «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ. համական խմբագրութիւններ, աշխատասիրութեամբ Յասմիկ Սիմոնանի» գրքում՝ Երեւան, 1989, էջ 51-59:

ընտանիք դարձան նաեւ մտաւոր ոլորտում: Նման աշխատանքների ժամանակ է, որ գործնականում ծնւում եւ փորձառութիւն էին առնում իսկական բանասէր-ձեռագրագէտները, եւ դարձնուում էր Մխիթարեանների բանասիրական հուժկու դպրոցը:

Հնարաւոր եղաւ ճշտորոշել վենետիկեան հրատարակութեան մէջ անանուն օգտագործուած բոլոր գրչագրերից իւրաքանչիւրի ինքնութիւնը: Դրանք են Վենետիկի Միսիթարեան մատենադարանի թիւ 424, 592, 893, 1107, 1259, 1390, 1489, 2239, 2480 ձեռագրերը: Բարեբախտաբար, այս ցանկի վերջին՝ տասներորդ ձեռագիրը՝ «Սոոյ օրինակը», որը տասնեակ տարիներ ի ցաւ բանաէլների՝ Յ. Տաշեանի, Գ. Յովակիեանի եւ ուրիշների, համարում է կորած եւ մնում էր, բնականաբար, չուսումնասիրուած, մենք դեռեւ 1970 թ. պարզել էինք, որ պահուում է Մաշտոցեան մատենադարանում (թիւ 5472) եւ ներկայացնում է ԺԶ. դարի նշանաւոր բանաստեղծ, խմբագիր ու նկարիչ Զաքարիա Գնունեցու կազմած մեծարժէք, նկարազարդ, ինքնագիր օրինակը, որ դեգերումներով լի իր կեանքի մի որոշ շրջանում հանգրուանել է նաեւ Սսի կաթողիկոսարանում, որից էլ ստացել է իր անունը: Ի դէպ, նորայայտ այս ձեռագիրը բնադրային ամբողջականութեամբ եւ Զաքարիայի յաւելած սեփական բանաստեղծութիւններով՝ կաֆաներով մենք հրատարակեցինք 1983 թ. մեր կազմած հատորում:

Առանձնակի ուշադրութեան է արժանի վենետիկեան հրատարակութեան դարձեալ անհեղինակ, փոքրածաւալ, սակայն, իր բնոյթով գիտական առաջաբանը, որի հեղինակը, ինչպէս յայտնի դարձաւ մեզ, միաբանութեան հոգեւոր Հայրերից, բանասէր Ռաֆայէլ Թրեանցն է, Մխիթարեան դպրոց-վարժարանների ուսումնական գործի ղեկավարութեան նպատակով 1853ին ստեղծուած խնամակալից ժողովի երկու ղեկավարներից մէկը:

ԱՆՀՐԱԺԵՄ է նշել, որ հատորի կայացման համար ամբարուած հսկայածաւալ աղքիւրագիտական նիւթերը հրատարակութիւնից դեռ շատ առաջ արդէն իրենց որոշակի նպաստն էին բերել հայ բառարանագրութեանը՝ հաւաստի հիմք դարձել Զարկագեան բառարանի բազմաթիւ բառայօդուածների համար, որոնք քննական հայեացքի դէպքում կարող են վկայել մասնաւորապէս Խորենացիական այս թարգմանութեամբ հայոց լեզուի

բառաձեւը տասնեակներով հարստացրած նորատեղծ բառերի մասին:

Յետադարձ հայեացք նետելով վենետիկեան հրատարակութեան երկարամեայ նախապատմութեանը եւ նրա ոլորտը ներքաշուած գիտնականների պատկառելի խմբի համագործակցուած, ու ժառանգորդական աշխատանքին, չենք կարող չնկատել, որ այն իւրովի շարունակում է յուշարձանի հայկականացման ու ժողովրդականացման ե. դարից սկիզբ առած աւանդական ընթացքը՝ այս անգամ արդէն հասնելով իր հերթական հանգրուանին ո՛չ գրչագիր մատեանի, այլ տպագիր գրքի տեսքով: Մկրտիչ Աւգերեանը, Միքայէլ Չամչեանը եւ միւսները՝ իբրեւ Հայոց մտաւոր կեանքի նորորեայ կազմակերպիչներ ժթ դարի սկիզբներին այս դէպքում եւս ձեռք մեկնեցին իրենց մեծ նախորդին՝ Մովսէս Խորենացուն, գործնականորէն շարունակելով նրա վիթխարի ձեռնարկումը՝ Աղեքսաննդր Մեծի օրինակով հզօր թագաւորի եւ ինքնուրոյն պետականութեան գաղափար սերմանելու հարազատ ժողովրդի սրտում: Հրատարակութիւնը, լինելով կալիսթէնէսեան երկի հայկական տարբերակի նկատմամբ գիտական հետաքրքրութիւնների մի արդիւնքաշատ հանգրուան, այնուամենայնիւ, չդարձաւ վերջակէտ, այլ ազդակ՝ աշխարհի տարբեր երկրներում յուշարձանի հրատարակութիւնների, թարգմանութիւննների ու ուսումնասիրութեան:

Ինչ վերաբերում է Մխիթարեան մատենադարանում այսօր պահուող Աղեքսաննդրի վէպի ձեռագրական հաւաքածուին, ապա պէտք է ասել, որ մինչեւ վերջերս նրա միաւորների մասին յստակ պատկերացում չկար. յայտնի էր սոսկ 2-3 ձեռագրի գոյութեան փաստը: Այժմ՝ յայտնաբերուած է 17 ձեռագիր, որ հանգամանալից նկարագրութեամբ, իբրեւ մի ամփոփ ձեռագրացուցակ ներկայացուած է յուշարձանի մեր պատրաստած հրատարակութեան մէջ³: Այստեղ առկայ նիւթերից անկասկած, առաւել ուշագրաւ են նորայայտ եւ բոլոր առումներով նորանշան երկու մատեան, որ կարող են ուսումնասիրութեան նոր երակներ բացել եւ ի թիւս այլ հարցերի, առաւել ճշտորոշել նաեւ յուշարձանի տարածուածութեան եւ բարոյագեղագիտական ներգործութեան ոլորտները:

³ Տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը:

Առաջինը թիւ 473 ձեռագիրն է՝ Վէպի թուրքերէն թարգմանութիւնը՝ կատարուած Ժէ. դարի նշանաւոր գործիչ Երեմիա Գէլչպի Քէօմիւրճեանի կողմից, ի պատասխան թուրքախօս հայերի հոծ զանգուածների գրական պահանջների։ Պարզուեց նաեւ, որ Քէօմիւրճեանի այս ինքնագիր միակ օրինակը՝ մասնագէտներին մինչեւ օրս անյայտ եւ, բնականաբար, չուսումնասիրուած, ունի նոյն գրապահոցում պահուող իր գրչագիր ընդօրինակութիւնը։

Աղբիւրագիտական առումով չափազանց կարեւոր փաստաթուղթ է նաեւ երկրորդ ձեռագիրը՝ թիւ 2736, որ նոյն կազմի մէջ զոյց ընդօրինակութեամբ ներկայացնում է Վէպի՝ արաբերէնից կատարուած Հայերէն թարգմանութիւնը։ Նորութիւն է ոչ միայն այս ձեռագիրը, այլեւ նման թարգմանութեան փաստն ինքնին, եւ, Համաձայն մեր նախնական քննութեան, այս բնագիրը յունալատինական նախաբնագրից միանգամայն տարբեր լինելով, արժանի է լրջմիտ քննութեան։

Ձեռագրական հաւաքածուի զարդերից է, անտարակոյս, շատ աւելի ուշ՝ 1976 թ. Միաբանութեանը ամերիկաբնակ բանասէր Յարութիւն Քիւրտեանի նուիրաբերած մատեանը։ Սա ԺԶ. դարի նշանաւոր բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու պատուէրով, հսկողութեամբ եւ մասնակցութեամբ ստեղծուած, նրա սեփական կաֆաներով ու մանրանկարներով հարստացուած շքեղ օրինակն է (1526 թ., Խառաբաստա), որը ինչպէս յայտնի դարձաւ, Աղեքսանդրի պատմութեան աղթամարցիական օրինակներից անդրանիկն է, պարզուեց նաեւ, որ այն մինչեւ 1813 է. գտնուել է Պոլսում եւ թէպէտ այն ժամանակ վենետիկ չի բերուել, սակայն ծանօթ է եղել վենետիկեան հրատարակիչներին։

Ամփոփենք: Միահիմնական գիտական հայրերի երկարամեայ տքնանքի արդիւնքը աւելին էր, քան գիտական նուանումը, այն քայլ էր ժամանակի հայ ընթերցողի հոգեւոր զարգացման ուղղութեամբ, քանի որ նրան վերստին հաղորդակից էր դարձնում հելլենական ազատատենչ թեւածող ոգուն, հզօր պետականութեան նրա փորձին, դրդելով խորհել եւ սեփական զարմի ապագայի մասին։